

«Վավերացնում եմ»
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
24 նոյեմբերի 2005 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

3 նոյեմբերի 2005 թվականի N 1928-Ն

1439 ԿՇՈԱԾՐԱՐՄԱՆ, ՎԱՃԱՌՔԻ, ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՑԱՆԿԱՑԱԾ ՏԻ-
ՊԻ ՓԱԹԵԹՎԱԾՔՆԵՐՈՒՄ ՉԱՓԱԾՐԱՐՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՔԱՆԱԿԻՆ
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՅԱՆՋՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱ-
ՍԻՆ

«Ստանդարտացման մասին»* Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդ-
վածի դրույթներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարու-
թյունը որոշում է.

1. Հաստատել կշռածրարման, վաճառքի, ներմուծման ժամանակ ցանկացած տի-
պի փաթեթվածքներում չափածրարված ապրանքների քանակին ներկայացվող պա-
հանջների տեխնիկական կանոնակարգը համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից 18
ամիս հետո:

Սույն որոշմամբ հաստատված տեխնիկական կանոնակարգի պահանջները չեն
տարածվում մինչև 2006 թվականի դեկտեմբերի 31-ը փաթեթվածքներում չափածրար-
ված ապրանքների վրա:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Ա. Մարգարյան

2005 թ. նոյեմբերի 21
Երևան

Տ Ե Խ Ն Ի Կ Ա Կ Ա Ն Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

ԿՇՈԱԾՐԱՐՄԱՆ, ԿԱՃԱՌՔԻ, ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՑԱՆԿԱՑԱԾ ՏԻՊԻ ՓԱԹԵԹՎԱԾՔՆԵՐՈՒՄ ՉԱՓԱԾՐԱՐՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՔԱՆԱԿԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՅԱՆՋՆԵՐԻ

I. ԿԻՐԱՌՄԱՆ ՈՒՈՐՏԸ

1. Սույն տեխնիկական կանոնակարգի գործողությունը տարածվում է կշռածրարման, վաճառքի, ներմուծման ժամանակ ցանկացած տիպի փաթեթավածքներում չափածրարված ապրանքների քանակին ներկայացվող պահանջների վրա՝ անկախ դրանց փաթեթավորման եղանակից:

2. Սույն տեխնիկական կանոնակարգով սահմանվում են փաթեթավորման միավորներում պարունակվող ապրանքների քանակին, չափագիտական վերահսկողության համար նախատեսված չափածրարված ապրանքների խմբաքանակին, հեղուկ ապրանքների չափածրարման համար օգտագործվող չափիչ անոթներին ներկայացվող չափագիտական պահանջները, ինչպես նաև փաթեթավածքներում չափածրարված ապրանքների մակնշմանը և փաթեթավածքներում չափածրարված ապրանքների խմբաքանակներին փաստացի կամ միջին պարունակության չափմանը ներկայացվող պահանջները:

II. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Սույն տեխնիկական կանոնակարգում կիրառվում են հետևյալ հասկացությունները՝

փաթեթավածք՝ միջոց կամ միջոցների համալիր, որն օգտագործվում է փաթեթավորելու համար և ապահովում է արտադրանքի շրջանառության գործընթացում դրա պահպանումը վնասվածքներից և կորուստներից, շրջակա միջավայրի աղտոտումից.

փաթեթավորում՝ փաթեթավածքի օգտագործմամբ արտադրանքի նախապատրաստումը փոխադրմանը, պահմանը, իրացմանը և սպառմանը.

փաթեթավորման միավոր՝ փաթեթավորվող արտադրանքը փաթեթավածքի հետ միացնելու արդյունքում ստացված ապրանք.

կշռածրարում՝ արտադրանքի տեղավորումը տարայի կամ փաթեթավորման նյութի մեջ՝ արտադրանքի նախնական կամ միաժամանակյա բաժնավորմամբ.

փաթեթավածքներում չափածրարված ապրանքներ՝ ապրանքներ փաթեթավածքներում, որոնք փաթեթավորվում և կնքվում են գնորդի բացակայությամբ, ընդ որում, փաթեթավածքի պարունակությունը չի կարող փոփոխվել՝ առանց այն բացելու կամ ձևախախտելու, իսկ փաթեթավածքում գտնվող ապրանքի զանգվածը, ծավալը, երկարությունը, մակերեսը կամ քանակ ցույց տվող այլ մեծությունները նշված են փաթեթավածքի վրա.

զտաքաշ (m)՝ փաթեթավածքում սպառողական ապրանքի քանակը.

սպառողական ապրանքի անվանական քանակ (M)՝ փաթեթավածքի վրա նշված ապրանքի քանակը.

փաթեթավածքներում չափածրարված ապրանքներ՝ փաթեթավածքի պարունակության միևնույն անվանական քանակով՝ փաթեթավածքներում չափածրարված ապրանքներ, որոնք բնութագրվում են բոլոր փաթեթավածքների վրա նշված սպառողական ապրանքի միևնույն անվանական քանակի արժեքով.

փաթեթվածքներում չափաճորարված ապրանքներ՝ փաթեթվածքի պարունակության տարբեր անվանական քանակով՝ փաթեթվածքներում չափաճորարված ապրանքներ, որոնք բնութագրվում են յուրաքանչյուր փաթեթվածքի վրա նշված սպառողական ապրանքի տարբեր անվանական քանակի արժեքներով:

փաթեթվածքներում չափաճորարված ապրանքի փաստացի քանակ՝ արտադրանքի այն քանակը (զանգվածը կամ ծավալը), որը փաստացի պարունակում է փաթեթվածքը:

փաթեթվածքներում չափաճորարված ապրանքի պարունակության թույլատրելի բացասական շեղում՝ փաթեթվածքում ապրանքի փաստացի պարունակության և անվանական քանակի միջև առկա տարբերությունը:

ցանկացած տիպի փաթեթվածքներում չափաճորարված ապրանքների քանակի նկատմամբ չափազիտական վերահսկողություն՝ փաթեթվածքներում չափաճորարված ապրանքների քանակին ներկայացվող պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության գործունեություն, որն իրականացվում է ցանկացած տիպի փաթեթվածքներում չափաճորարված ապրանքներ արտադրող, կշռաճորարող, վաճառող կամ ներմուծող իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից:

ցանկացած տիպի փաթեթվածքներում չափաճորարված ապրանքների կշռաճորարման, վաճառքի և ներմուծման ժամանակ դրանց քանակի նկատմամբ պետական չափազիտական վերահսկողություն՝ սահմանված պահանջներին փաթեթվածքներում չափաճորարված ապրանքների քանակի համապատասխանության ստուգման նպատակով որակի պետական տեսչության կողմից իրականացվող գործունեություն՝ արտադրողի, կշռաճորարողի, վաճառողի կամ ներմուծողի կողմից փաթեթվածքներում չափաճորարված ապրանքների քանակի նկատմամբ վերահսկողությանը վերաբերող փաստաթղթերով հիմնավորված արդյունքների ստուգման, ինչպես նաև փաթեթվածքներում չափաճորարված ապրանքների քանակի համապատասխանության գործիքային ստուգման միջոցով:

փաթեթվածքներում չափաճորարված ապրանքների խմբաքանակ, որը նախատեսված է չափազիտական վերահսկողության համար՝ փաթեթվածքներում չափաճորարված ապրանքներ, որոնց վրա տարածվում են պետական չափազիտական վերահսկողության արդյունքները, որոնք ունեն սպառողական ապրանքի միևնույն անվանական քանակը, փաթեթվածքի միևնույն տեսակը, կշռաճորարված են միևնույն իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից:

Կշռաճորարման ժամանակ փաթեթվածքներում չափաճորարված ապրանքների քանակի չափազիտական վերահսկողություն և պետական չափազիտական վերահսկողություն իրականացնելիս՝ փաթեթվածքներում չափաճորարված ապրանքների խմբաքանակներ են համարվում փաթեթվածքներում չափաճորարված այն ապրանքները, որոնք ունեն միևնույն անվանական քանակը, միևնույն տեղում որոշակի ժամանակահատվածում իրականացվող փաթեթավորման միևնույն եղանակը և նախատեսված են միաժամանակյա հանձնման, ընդունման, ստուգման և որակական գնահատման համար:

փաթեթվածքներում չափաճորարված ապրանքների խմբաքանակի միջին պարունակություն (միջին պարունակություն)՝ փաթեթվածքներում միևնույն անվանական քանակով չափաճորարված ապրանքների խմբաքանակի բնութագիր, որով որոշվում է խմբաքանակում զտաքաշի միջին արժեքը:

«կեղծ» փաթեթվածք՝ փաթեթվածք, որն իր տեսքով կեղծ պատկերացում է տալիս փաթեթվածքում ապրանքի պարունակության քանակի մասին և, որը փաթեթվածքի ծավալի ավելի քան 30 տոկոսով լցված չէ ապրանքով (բացառությամբ նվերների և հուշանվերների, ինչպես նաև այն ապրանքների, որոնց փաթեթվածքներին, ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերին համապատասխան, ներկայացված են առանձնահատուկ պահանջներ):

փաթեթվածքում չափաճորարված ապրանքի հիմնական գին (Գ)՝ սպառողական

ապրանքի միավոր քանակի համար հաշվարկած ապրանքի գինը (օրինակ՝ 1 կգ-ի, 1 լ-ի և այլնի գինը)։

հիմնական նյութի զանգված՝ առանց հեղուկի (m_p)՝ քանած մթերքի զանգվածն առանց լցահեղուկի (կանաչ ոլոռ՝ առանց լցալուծույթի, աղ դրած բանջարեղեն՝ առանց աղաջրի, մրգեր և բանջարեղեն՝ առանց հյութի և այլն)

փաթեթավորման միավորի զտաքաշի թույլատրելի բացասական շեղումների սահման (T)՝ փաթեթավորման միավորում թերլցված ապրանքի առավելագույն քանակը, որի դեպքում ապրանքը դեռևս համարվում է շրջանառության մեջ դնելու համար պիտանի։

զտաքաշի նվազագույն թույլատրելի արժեք (m_p)՝ փաթեթավորման միավորի զտաքաշի պարունակության թույլատրելի արժեքի սահմանը, որի դեպքում այն դեռևս համարվում է շրջանառության մեջ դնելու համար պիտանի ($m_p = M - T$)։

ըստ «զտաքաշ» պարամետրի խոտանված փաթեթավորման միավոր (խոտանված փաթեթավորման միավոր)՝ փաթեթավորման միավոր, որի զտաքաշը փոքր է զտաքաշի նվազագույն թույլատրելի արժեքից (m_p -ից), որի հետևանքով փաթեթավորման միավորը շրջանառության մեջ դնելու համար պիտանի չէ։

չափիչ անոթ՝ սպառողական տարա՝ հեղուկ չափածրարված ապրանքների համար, որն ունի շշի ձև, պատրաստված է ապակուց կամ ձևը պահպանող այլ թափանցիկ նյութից, որի չափերն ու լրիվ ծավալը հայտնի են և այնքան հաստատուն են, որ դրա պարունակության քանակը կարող է բավարար ճշգրտությամբ որոշվել՝ առանց այնտեղ գտնվող հեղուկի քանակի որոշման անհրաժեշտության։

չափիչ անոթի անվանական տարողություն՝ հեղուկի ծավալը, որը տեղավորվում է մինչև որոշակի ծավալը լցնելու համար նախատեսված անոթում։

չափիչ անոթի լրիվ տարողություն՝ հեղուկի ծավալը, որը տեղավորվում է անոթում՝ այն մինչև վերջ լցնելիս։

չափիչ անոթի անվանական (լրիվ) տարողության իրական արժեք՝ հեղուկի ծավալը, որը փաստացի պարունակում է անոթը, երբ այն լցված է մինչև անվանական (լրիվ) տարողությանը համապատասխանող մակարդակը։

չափիչ անոթի անվանական (լրիվ) տարողության իրական արժեքի առավելագույն թույլատրելի շեղում՝ 20°C ջերմաստիճանում չափված չափիչ անոթի անվանական (լրիվ) տարողության իրական արժեքի և ստանդարտացման նորմատիվ փաստաթղթով սահմանված ու նակնշման ժամանակ նշվող անվանական (լրիվ) տարողության արժեքի միջև թույլատրելի ամենամեծ տարբերությունը (դրական կամ բացասական)։

III. ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՉԱՓԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՅԱՆՋՆԵՐԸ

4. Յուրաքանչյուր փաթեթավորման միավորի անվանական քանակի արժեքից զտաքաշի պարունակության բացասական շեղումը չպետք է գերազանցի սույն տեխնիկական կանոնակարգի՝

ա) 1-ին աղյուսակում ներկայացված՝ փաթեթվածքի պարունակության միևնույն անվանական քանակով (10 կգ-ից կամ 10 լ-ից ոչ ավելի) փաթեթավորման միավորներում թույլատրելի բացասական շեղումների սահմանը։

Աղյուսակ 1

Սպառողական ապրանքի անվանական քանակը, M, գ կամ մլ	Թույլատրելի բացասական շեղումների սահմանը, T	
	% M-ից	գ կամ մլ
5-ից ավելի մինչև 50-ը ներառյալ	9	-
50-ից ավելի մինչև 100-ը ներառյալ	-	4,5
100-ից ավելի մինչև 200-ը ներառյալ	4,5	-

200-ից ավելի մինչև 300-ը ներառյալ	-	9
300-ից ավելի մինչև 500-ը ներառյալ	3	-
500-ից ավելի մինչև 1000-ը ներառյալ	-	15
1000-ից ավելի մինչև 10000-ը ներառյալ	1,5	-

1-ին աղյուսակում ներկայացված թույլատրելի բացասական շեղումների սահմանի (T-ի) բացարձակ արժեքները (հաշվարկված տոկոսներով) 1000-ից ոչ պակաս M-ի համար կլորացնում են մինչև տասնորդական մասերը, իսկ 1000-ից ավելի M-ի համար՝ մինչև ամբողջ մասերը:

բ) 2-րդ աղյուսակում ներկայացված՝ փաթեթվածքի պարունակության միևնույն անվանական քանակով (10 կգ-ից կամ 10 լ-ից ավելի) փաթեթավորման միավորներում թույլատրելի բացասական շեղումների սահմանը:

Աղյուսակ 2

Սպառողական ապրանքի անվանական քանակը, M, կգ կամ լ	Թույլատրելի բացասական շեղումների սահմանը, T	
	% M-ից	գ կամ մլ
10-ից ավելի մինչև 15-ը ներառյալ	-	150
15-ից ավելի մինչև 50-ը ներառյալ	1,0	-
50-ից ավելի մինչև 100-ը ներառյալ	-	500
100-ից ավելի	0,5	-

գ) 3-րդ աղյուսակում ներկայացված՝ փաթեթվածքի պարունակության տարբեր անվանական քանակով փաթեթավորման միավորներում թույլատրելի բացասական շեղումների սահմանը:

Աղյուսակ 3

Սպառողական ապրանքի անվանական քանակը, M, գ կամ մլ	Թույլատրելի բացասական շեղումների սահմանը, T, գ կամ մլ
Մինչև 100-ը ներառյալ	1,0
100-ից ավելի մինչև 500-ը ներառյալ	2,0
500-ից ավելի մինչև 2000-ը ներառյալ	5,0
2000-ից ավելի մինչև 10000-ը ներառյալ	10,0

3-րդ աղյուսակում ներկայացված թույլատրելի բացասական շեղումների սահմանի (T-ի) արժեքները 1000-ից պակաս M-ի համար կլորացնում են մինչև տասնորդական մասերը, իսկ 1000-ից ավելի M-ի համար՝ մինչև ամբողջ մասերը:

5. Առանց հեղուկի հիմնական նյութի զանգվածի իրական արժեքի բացասական շեղումը փաթեթվածքի վրա նշված այդ արժեքի անվանական քանակից չպետք է գերազանցի սույն տեխնիկական կանոնակարգի 1-ին աղյուսակում ներկայացված թույլատրելի բացասական շեղումների եռակի սահմանը:

6. Յուրաքանչյուր փաթեթավորման միավորի պարունակության բացասական շեղումն անվանական քանակից՝ երկարության նշմամբ, չպետք է գերազանցի փաթեթվածքի վրա նշված անվանական քանակի 2 տոկոսը:

7. Յուրաքանչյուր փաթեթավորման միավորի պարունակության բացասական շեղումն անվանական քանակից՝ մակերեսի նշմամբ, չպետք է գերազանցի փաթեթվածքի վրա նշված անվանական քանակի 3 տոկոսը:

8. Փաթեթավորման միավորի պարունակությունը պետք է լցնի փաթեթվածքի ծավալի 70 տոկոսից ոչ պակասը (բացառությամբ մվերների և հուշանվերների, ինչպես նաև այն ապրանքների, որոնց փաթեթվածքին, ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերին համապատասխան, ներկայացվում են առանձնահատուկ պահանջներ):

9. Փաթեթավորման միավորները, որոնք չեն համապատասխանում սույն տեխնիկական կանոնակարգի 4-7-րդ կետերի պահանջներին, համարվում են խտտանված, իսկ 8-րդ կետին չհամապատասխանողները՝ «կեղծ փաթեթվածք» և ենթակա չեն շրջանառության մեջ դնելու:

10. Փաթեթվածքներում չափածորարված ապրանքների վաճառքի ժամանակ վաճառողը, բացի փաթեթավորման միավորի գնից, պետք է նշի փաթեթվածքում չափածորարված ապրանքի հիմնական գնի արժեքը:

11. Անվանական քանակից փաթեթվածքի զտաքաշի թույլատրելի դրական շեղումներին (որոնք բնութագրում են անվանական քանակից պարունակության գերազանցումը) ներկայացվող պահանջները սահմանում է փաթեթվածքներում չափածորարված ապրանքներ արտադրող, կշռածորարող, վաճառող կամ ներմուծող կազմակերպությունը՝ տվյալ արտադրանքի ստանդարտացման նորմատիվ փաստաթղթով: Այդ պահանջները պետական չափագիտական վերահսկողության ենթակա չեն:

IV. ՓԱԹԵԹՎԱԾՔՆԵՐՈՒՄ ՉԱՓԱԾՐԱՐՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԽՄԲԱՔԱՆԱԿԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՉԱՓԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՅՆԱՋՆԵՐԸ

12. Փաթեթվածքի պարունակության միևնույն անվանական քանակով փաթեթվածքներում չափածորարված ապրանքների խմբաքանակը՝ 10 կգ-ը կամ 10 լ-ը չգերազանցող զանգվածի կամ ծավալի նշմամբ, պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին՝

ա) խմբաքանակի միջին պարունակությունը չպետք է պակաս լինի փաթեթվածքի վրա նշված անվանական քանակից.

բ) սույն տեխնիկական կանոնակարգի 4-րդ կետի «ա» ենթակետով սահմանված թույլատրելի բացասական շեղումներին չհամապատասխանող խտտանված փաթեթավորման միավորների քանակը խմբաքանակում չպետք է գերազանցի խմբաքանակի չափի 2 տոկոսը.

գ) փաթեթվածքներում չափածորարված ապրանքների խմբաքանակում չպետք է լինի ոչ մի փաթեթավորման միավոր, որի անվանական քանակից զտաքաշի բացասական շեղումը գերազանցի սույն տեխնիկական կանոնակարգի 1-ին աղյուսակում ներկայացված թույլատրելի բացասական շեղումների կրկնակի սահմանը:

13. Փաթեթվածքի պարունակության միևնույն անվանական քանակով փաթեթվածքներում չափածորարված ապրանքների խմբաքանակը՝ առանց հեղուկի հիմնական նյութի զանգվածի նշման, ըստ այդ ցուցանիշի պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին՝

ա) խմբաքանակի միջին պարունակությունն ըստ «հիմնական նյութի զանգվածն առանց հեղուկի» ցուցանիշի չպետք է պակաս լինի փաթեթվածքի վրա նշված առանց հեղուկի հիմնական նյութի անվանական քանակից.

բ) փաթեթվածքներում չափածորարված ապրանքների խմբաքանակում չպետք է լինի ոչ մի փաթեթավորման միավոր, որի առանց հեղուկի հիմնական նյութի զանգվածի փաստացի արժեքի բացասական շեղումն անվանական քանակից գերազանցի սույն տեխնիկական կանոնակարգի 1-ին աղյուսակում ներկայացված թույլատրելի բացասական շեղումների եռապատիկ սահմանը:

14. Փաթեթվածքի պարունակության միևնույն անվանական քանակով փաթեթվածքներում չափածորարված ապրանքների խմբաքանակը՝ հատաքանակի նշմամբ, պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին՝

ա) 30 հատը չգերազանցող անվանական քանակի դեպքում չափաձորարված ապրանքների խմբաքանակում չպետք է լինի ոչ մի փաթեթավորման միավոր, որի պարունակությունը չհամապատասխանի անվանական քանակին:

բ) 30 հատը գերազանցող անվանական քանակի դեպքում՝

խմբաքանակի միջին պարունակությունը չպետք է պակաս լինի փաթեթավածքի վրա նշված անվանական քանակից,

փաթեթավածքներում չափաձորարված ապրանքների խմբաքանակում չպետք է լինի ոչ մի փաթեթավորման միավոր, որի համար անվանական քանակից փաստացի պարունակության թույլատրելի բացասական շեղումը գերազանցի փաթեթավածքի վրա նշված անվանական քանակի 2 տոկոսը:

15 Փաթեթավածքի պարունակության միևնույն անվանական քանակով փաթեթավածքներում չափաձորարված ապրանքների խմբաքանակը՝ երկարության նշմամբ, պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին՝

ա) խմբաքանակի միջին պարունակությունը չպետք է պակաս լինի փաթեթավածքի վրա նշված անվանական քանակից

բ) փաթեթավածքներում չափաձորարված ապրանքների խմբաքանակում չպետք է լինի ոչ մի փաթեթավորման միավոր, որի համար անվանական քանակից փաստացի պարունակության բացասական շեղումը գերազանցի փաթեթավածքի վրա նշված անվանական քանակի 2 տոկոսը:

16 Փաթեթավածքի պարունակության միևնույն անվանական քանակով փաթեթավածքներում չափաձորարված ապրանքների խմբաքանակը՝ մակերեսի նշմամբ, պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին՝

ա) խմբաքանակի միջին պարունակությունը չպետք է պակաս լինի փաթեթավածքի վրա նշված անվանական քանակից.

բ) փաթեթավածքներում չափաձորարված ապրանքների խմբաքանակում չպետք է լինի ոչ մի փաթեթավորման միավոր, որի համար անվանական քանակից փաստացի պարունակության բացասական շեղումը գերազանցի փաթեթավածքի վրա նշված անվանական քանակի 3 տոկոսը

17. Փաթեթավածքներում չափաձորարված ապրանքների խմբաքանակը, որը չի համապատասխանում սույն տեխնիկական կանոնակարգի 12-16-րդ կետերի պահանջներին, մինչև հայտնաբերված թերությունների վերացումն առաքման ենթակա չէ:

18. Փաթեթավածքներում չափաձորարված այն ապրանքների համար, որոնց անվանական քանակը գերազանցում է 10 կգ-ը կամ 10 լ-ը, ինչպես նաև փաթեթավածքի տարբեր անվանական քանակով փաթեթավածքներում չափաձորարված ապրանքների խմբաքանակի միջին պարունակության և խմբաքանակում խոտանված փաթեթավորման միավորների քանակի նկատմամբ պահանջները սույն տեխնիկական կանոնակարգով չեն կանոնակարգվում:

19 Փաթեթավածքներում չափաձորարված այն ապրանքների համար, որոնց անվանական քանակը գերազանցում է 10 կգ-ը կամ 10 լ-ը, ինչպես նաև փաթեթավածքի տարբեր անվանական քանակով փաթեթավածքներում չափաձորարված ապրանքների անվանական քանակից գտաքաշի թույլատրելի բացասական շեղումը չպետք է կրի համակարգված բնույթ (անվանական քանակից գտաքաշի թույլատրելի բացասական շեղումների քանակը չպետք է գերազանցի դրական շեղումների քանակը):

20. Փաթեթավածքներում չափաձորարված այն ապրանքների խմբաքանակները, որոնց անվանական քանակը գերազանցում է 10 կգ-ը կամ 10 լ-ը, ինչպես նաև տարբեր անվանական քանակով փաթեթավածքներում չափաձորարված ապրանքների խմբաքանակները չպետք է պարունակեն ոչ մի խոտանված փաթեթավորման միավոր:

**Փաթեթվածքներում չափածրարված ապրանքների
մակնշմանը ներկայացվող պահանջները**

21 Փաթեթավորման միավորի մակնշվածքը, բացի արտադրանքի տվյալ տեսակի մակնշվածքին ներկայացվող և Հայաստանի Հանրապետության համապատասխան օրենքներով, այլ իրավական ակտերով (տեխնիկական կանոնակարգերով) և ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերով սահմանված պահանջներից, պետք է պարունակի՝

ա) տեղեկատվություն փաթեթվածքում սպառողական ապրանքի անվանական քանակի մասին՝ արտահայտված կիլոգրամներով (կգ), գրամներով (գ), լիտրերով (լ), միլիլիտրերով (մլ) և տպագրված առնվազն 6 մմ բարձրությամբ տառերով՝ 1000 գ-ը կամ 1000 մլ-ը գերազանցող անվանական քանակի դեպքում, 4 մմ բարձրությամբ տառերով՝ 200-1000 գ կամ 200-1000 մլ անվանական քանակի դեպքում, և 3 մմ բարձրությամբ տառերով, եթե անվանական քանակը չի գերազանցում 200 գ-ը կամ 200 մլ-ը՝ չափման միավորի նշագրի կամ, անհրաժեշտության դեպքում, միավորի անվանման նշմամբ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 9-ի N 1938-Ն որոշման N 1 հավելվածով սահմանված մեծությունների միավորների անվանման, նշագրման և գրելաձևի, ներառյալ հիմնական նյութի զանգվածն առանց հեղուկի՝ լցահեղուկ պարունակող փաթեթվածքներում չափածրարված ապրանքների համար:

բ) փաթեթվածքում տվյալ չափածրարված ապրանքի կշռածրարումն իրականացնող իրավաբանական անձի անվանումը և գտնվելու վայրը կամ անհատ ձեռնարկատիրոջ անվանատառը, ազգանունը, բնակության վայրը կամ ներմուծողի տվյալները:

գ) սույն տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջներին փաթեթվածքներում չափածրարված ապրանքների քանակի համապատասխանությունը հավաստող «e» նշանը:

Փաթեթվածքի վրա «e» նշանի առկայությունը վկայում է, որ տվյալ արտադրանքը շրջանառության մեջ դնող տնտեսավարող սուբյեկտը (արտադրողը, կշռածրարողը կամ ներմուծողը) իրականացնում է փաթեթվածքներում չափածրարված ապրանքների քանակի նկատմամբ չափազիտական վերահսկողություն և ապահովում սույն տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջներին դրա համապատասխանությունը:

«e» նշանը դրվում է փաթեթվածքի այն տեսադաշտում, որտեղ նշվում է անվանական քանակը, ընդ որում, նշանի բարձրությունը պետք է լինի 3 մմ-ից ոչ պակաս ($H \geq 3$ մմ):

«e» նշանի չափը և փաթեթվածքի վրա նշագրման եղանակը ընտրում են փաթեթվածքներում չափածրարված ապրանքներն արտադրող, կշռածրարող կամ ներմուծող իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը:

**V. ՓԱԹԵԹՎԱԾՔՆԵՐՈՒՄ ՀԱՓԱԾՐԱՐՎԱԾ ՀԵՂՈՒԿ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ՈՐՊԵՏ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՏԱՐԱ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ
ՀԱՓԻՉ ԱՆՈՐՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՓԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՅԱՆՁՆԵՐ**

22. Չափիչ անոթի վրա պետք է լինի չջնջվող, լավ նկատելի և ընթեռնելի մակնշվածք, որը պետք է պարունակի՝

ա) անվանական տարողության արժեքը՝ լիտրերով (լ), միլիլիտրերով (մլ)՝ մեծության միավորի նշմամբ,

բ) արտադրողի անվանումը կամ ապրանքային նշանը, գտնվելու վայրը,

գ) լրիվ տարողության արժեքը՝ միլիլիտրերով՝ առանց «մլ» մեծության միավորի նշման (եթե չափիչ անոթը նախատեսված է մինչև ծավալի հաստատումն չլցվող մասի լցումը),

դ) հեռավորությունը չափիչ անոթի վերին եզրից մինչև նշված անվանական տարողությանը համապատասխանող լցման մակարդակը՝ միլիմետրերով՝ «մմ» մեծության

միավորի նշմամբ (եթե չափիչ անոթը նախատեսված է մինչև հաստատուն մակարդակը լցնելու համար):

23. Անվանական կամ լրիվ տարողությունից չափիչ անոթի տարողության փաստացի արժեքների շեղումները չպետք է կրեն համակարգված բնույթ (բացասական շեղումների քանակը չպետք է գերազանցի դրական շեղումների քանակը) և չպետք է գերազանցեն սույն տեխնիկական կանոնակարգի 4-րդ աղյուսակում ներկայացված առավելագույն թույլատրելի շեղումները.

Աղյուսակ 4

Անվանական կամ լրիվ ծավալը, մլ	Թույլատրելի բացասական շեղումների սահմանը, T	
	% անվանական ծավալից	մլ
Մինչև 50-ը ներառյալ	6	-
50-ից ավելի մինչև 100-ը ներառյալ	-	3
100-ից ավելի մինչև 200-ը ներառյալ	3	-
200-ից ավելի մինչև 300-ը ներառյալ	-	6
300-ից ավելի մինչև 500-ը ներառյալ	2	-
500-ից ավելի մինչև 1000-ը ներառյալ	-	10
1000-ից ավելի մինչև 5000-ը ներառյալ	1	-

VI. ՓԱԹԵԹՎԱԾՔՆԵՐՈՒՄ ՉԱՓԱԾՐԱՐՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՓԱՍՏԱՑԻ ԿԱՍ ՄԻՋԻՆ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՉԱՓՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՅԱՆՁՆԵՐԸ

24. Փաթեթվածքներում չափածրարված ապրանքների փաստացի կամ միջին պարունակությունը կարող է չափվել ուղղակիորեն զանգվածի կամ ծավալի որոշմամբ կամ, փաթեթվածքներում չափածրարված հեղուկ ապրանքների դեպքում՝ չափածրարված ապրանքը կշռելու և դրա խտությունը չափելու միջոցով:

Չափումները պետք է կատարվեն համապատասխան ստուգաչափված չափման միջոցներով:

Անկախ կիրառվող մեթոդից՝ փաթեթվածքներում չափածրարված ապրանքների փաստացի կամ միջին պարունակության չափման ժամանակ չափումների սխալանքը չպետք է գերազանցի չափածրարված ապրանքների անվանական քանակի համար սույն տեխնիկական կանոնակարգով սահմանված թույլատրելի բացասական շեղումների սահմանի 1/5-ը:

25. Փաթեթվածքներում չափածրարված ապրանքների խմբաքանակը պետք է ստուգվի նմուշառման միջոցով և կատարվի՝

ա) փորձամնուշի մեջ յուրաքանչյուր փաթեթավորման միավորի փաստացի պարունակության ստուգում,

բ) փորձամնուշի մեջ բոլոր փաթեթավորման միավորների միջին փաստացի պարունակության ստուգում:

Փաթեթվածքներում չափածրարված ապրանքների խմբաքանակը համարվում է փորձարկումն անցած, եթե նշված երկու ստուգման արդյունքներն էլ համապատասխանում են սույն տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջներին:

Փաթեթվածքներում չափածրարված ապրանքների խմբաքանակի ստուգումներից յուրաքանչյուրի համար մշակվում է նմուշառման 2 պլան՝ փաթեթվածքի բացման գործողություն չպարունակող փորձարկման համար (փորձարկում, որի ընթացքում փաթեթավորման միավորը չի բացվում) և փաթեթվածքի բացման գործողություն պարունակող փորձարկման համար (փորձարկում, որի ընթացքում բացվում է փաթեթավորման միավորը):

Տնտեսական և գործնական նկատառումներով՝ փաթեթվածքի բացման գոյծողություն պարունակող փորձարկումների թիվը պետք է հասցվի նվազագույնի: Դրանք շուտ ավելի պակաս արդյունավետ են, քան փաթեթվածքի բացման գործողություն չպարունակող փորձարկումները: Այդ իսկ պատճառով փաթեթվածքի բացման գործողություն պարունակող փորձարկումները պետք է կատարվեն միայն այն դեպքում, երբ փաթեթվածքի բացման գործողություն չպարունակող փորձարկման կատարումն անհնար է: Փաթեթվածքի բացման գործողություն պարունակող փորձարկումները չպետք է կիրառվեն 100 միավորը չգերազանցող փաթեթվածքներում չափածրարված ապրանքների խմբաքանակների համար:

Երբ փաթեթավորման միավորներն ստուգվում են փաթեթավորման գործընթացի վերջում, յուրաքանչյուր փաթեթվածքում չափածրարված ապրանքների խմբաքանակում դրանց քանակը պետք է հավասար լինի փաթեթավորման գործընթացում առավելագույն օրական արդյունքին՝ առանց խմբաքանակում փաթեթավորման միավորների թվի սահմանափակման:

Անացած բոլոր դեպքերում խմբաքանակում փաթեթավորման միավորների թիվը չպետք է գերազանցի 10000-ը:

100 փաթեթավորման միավորը չգերազանցող փաթեթվածքներում չափածրարված ապրանքների խմբաքանակների նկատմամբ փաթեթվածքի բացման գործողություն չպարունակող փորձարկման դեպքում վերջինս պետք է իրականացվի ամբողջությամբ (100 տոկոսով):

26. Օդաթափանց և խոնավաթափանց տարայում փաթեթավորված չափածրարված ապրանքների համար, որոնք չորացման հետևանքով ենթակա են բնական կորստի, միջին պարունակության ու զանգվածի բնական կորստի արժեքի փորձարկումների պարբերությունը՝ կախված պահման ժամկետից և պայմաններից, սահմանվում է արտադրող կազմակերպության որոշակի արտադրամասի ստանդարտացման նորմատիվ փաստաթղթով՝ ապահովելով նականշվածքում համապատասխան տեղեկատվության առկայությունը:

VII. ՉԱՓՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՅՈՎՈՒՄԸ

27. Փաթեթվածքներում չափածրարված ապրանքների քանակի որոշման ժամանակ չափումների միասնականությունը պետք է ապահովվի «Չափումների միասնականության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

VIII. ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՅՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

28. Սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին կշռածորարման, վաճառքի, ներմուծման ժամանակ ցանկացած տիպի փաթեթվածքներում չափածրարված ապրանքների քանակի համապատասխանության պետական չափագիտական վերահսկողությունը պետք է իրականացվի «Չափումների միասնականության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Մ. Թովուզյան